Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2014 թ. նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ

Ս. Ա. Առաքելյան

ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգը տարածվում է առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների վրա:

1.2. Ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգի նպատակն է կրթական ծրագրում առաջարկվող ցանկից ուսանողին հնարավորություն տալ ընտրել իրեն նախասիրությանը և կարողությանը համապատասխան դասընթաց:

1.3. Սույն կարգի իրավական հիմքերն են կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, ԵՊՀ ԻՄ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Ուսանողը, մասնագիտությունից անկախ, բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ծրագրի կատարման արդյունքում պետք է կուտակի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

2.2. Ուսանողն ուսումնառության ընթացքում իր մասնագիտական ուսուցման համար իրավունք ունի ընտրելու մասնաճյուղի կողմից առաջարկվող ընտրովի դասընթացներ՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

2.3. Դասընթացները, ըստ յուրացման բնույթի, բաժանվում են երկու հիմնական խմբի՝

ա/ պարտադիր դասընթացներ,

բ/ կամընտրական դասընթացներ:

2.4. Պարտադիր դասընթացներն ամրագրված են յուրաքանչյուր կիսամյակում և պարտադիր են ուսանողի համար:

2.5. Կամընտրական դասընթացները առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

2.6. Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածք և կազմված է մեկից ավելի առարկաներից, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

3. ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

3.1. Դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում ուսանողին օգնում է ուսումնական խորհրդատուն/կուրատորը/:

3.2. Ուսումնական խորհրդատուն կազմակերպում է դասընթացն ընտրող ուսանողների և այդ դասընթացը սպասարկող ամբիոնների մասնագետների հետ հանդիպումներ՝ ծրագրերին ծանոթացնելու համար:

3.3. Ուսումնական խորհրդատուի կողմից ուսանողի դասընթացի ընտրությունը գրանցվում է անհատական թերթիկում և ստորագրվում է ուսանողի կողմից:

3.4. Դասընթացների ընտրության ժամանակ ակադեմիական խումբ չձևավորվելու դեպքում ուսանողին տրվում է կրկնակի ընտրության հնարավորություն: